


„ M E X Y “

Арм. седмиченъ вестникъ
Редакция и администрация
Ц. Симеонъ 72, София
Ред. К. ХАЛАДЖАНЪ
Стоп. Н. ХАЛАДЖАНЪ

„ M E G H O U “
Journal humoristique arm.
Redaction & administration
N. HALADJIAN
Rue Tzar Siméon, № 72
B. P. 444 Sofia (Bulgarie)



ՆՐԳԻԾԱԿԱՆ ՆԱԲԱՐԱԹՆԵՐԾ

Մ Ե Ղ Ո Ւ

ԽՐԱԿԱՐԱԿԱՆ ԵՆ

Վ. ԿԱՐԱՄՅԱՆԻ

Փողոց Յար Միսկոն, քիւ 72
Հեռախոսի քիւ՝ 3-19-54

Փոխարկանց և գրանցումների
տնտեսական հարցեր
ԽՐԱԿԱՐԱՆ Կ. ՀԱԼԱԺԿԱՆ
Փողոց Յար Միսկոն, քիւ 72
Կամ՝ Փոստարկի 444 Մեքիսո

ԲԱՆԿԱՆ ԴԱՎՈՒՄՈՒՆԵՐԸ

Տարեկան 150, վեցամսեայ 75 լ.
Արտատպումը՝ տարեկան 3 անգամ

ՔԱՐՈՉԻՆ ՆՊԱՏԱԿԸ

ՎԻՍԿ ԼՍ. ՅՐԱՆԱ

ՌԱՏԻՑՈ ԻՉՄԻՐՈՅՈՒՆ

Հանդիսական կերակրի օր մը՝ աւագերէցը հանդերձեալ էր
Ս. Պատարազ մատուցանելու ու աւուր պատշաճ քարոզ խօսելու:
Երէցուհին, որ իր ամուսին տէր հօր ճարտասանութեան մասին
չատ գովասանքներ րոտած էր թէեւ, սակայն ո՛չ մէկ կերակրի եկե-
ղեցի գոցած էր իր ամուսնին աւուր պատշաճները մտիկ ընելու
համար: Տէր հայրը այդ հանդիսական կերակրին պիտի խօսէր բա-
րեգործութեան մասին: Եւ ի՞նչ կայ աւելի զեղեցիկ բան աշ-
խարհիս վրայ՝ քան բարեգործութեանը, քանի որ տարու մէջ
միշտ հարստանաւ մը կայ, իսկ ընդունելու, ստանալու մէջ՝ քօ-
ղարկուած նուաստացում մը:



— Գիտէ՞ք թէ ինչ ըսել է ձմեռ ատեն տնգործ և
այլուստի միջոցէ դուրկ մնալ:
— Բայց դուք ո՞ւր կ'աշխատէիք:
— Թաւրոնի մէջ ձմեռային սպայ էի:

Երէցուհին կ'որոշէ այդ կերակրի եկեղեցի երթալ, թէ՛ ըզ-
մայրելու համար ամուսնին ճարտասանութեանը վրայ և թէ՛
բարեգործութեան քրիստոնէութեան իմաստին թափանցելու հա-
մար:

Կերակրի օրը, երէցուհին հագուած սքուած՝ կանուխին եկե-
ղեցի կ'երթայ ու խորանին մօտ՝ գաւթի թիւն մէջ տեղ կը դրուէ:
Պատարազը կը սկսի ու կարգը կուզայ քարոզելն Տէր հայրը,
կարծես այդ օրը ստուերապէս ներշնչուած՝ բանիւսաց քարոզ մը
կը խօսի ու բարեգործութեան քրիստոնէական իմաստն ու էութե-
թիւնը կը բացատրէ ունկնդիր հաւատացեալներուն: Ան եզրա-
կացնելով կ'ըսէ. —

«Ամբողջ ժողովուրդ, եթէ երկու շաբթի ունիք տուէք մէկը
աղքատին, եթէ երկու վարտիկ ունիք՝ տուէք մէկը աղքատին,
վերջապէս ինչ որ ունիք գոյ՞ մէկը տուէք աղքատին»:

Այս եզրակացութիւնը ինչպէս ժողովուրդին, նայպէս ալ
երէցուհին դէպք կուզայ:

Քարոզէն վերջ, առանց սպասելու եկեղեցիի աւարտանք,
երէցուհին տուն կը գնանայ: Հազիւ տուն մտած՝ դուռը կը գոր-
նուի և աղքատ մը ներկայանալով երէցուհին՝ ողորմութիւն
կը խնդրէ:

Երէցուհին, խանդավառուած իր ամուսնին քարոզէն և ա-
տոր հանելի ըլլալու ցանկութենէն թեւադրուած, տէր հօր գոյ՞
վարտիկներէն, շաբթիներէն, կոչիներէն մէկ մէկ հատ աղքա-
տին կը նուիրէ:

Յետ աւարտանքի եկեղեցւոյ՝ տէր հայրը տուն կու գայ ու
կ'ածուցարէ ձերմակեղէն փոխելու, քանի որ չափազանց քրտնած
էր պատարազէն ու քարոզէն: Երբ ձերմակեղէն կ'ուզէ, երէցու-
հին կը պատասխանէ թէ չունի:

- Կնի՛կ, ինչպէս թէ ձերմակեղէն չունիք:
— Այո՛, ունեցածդ կուսակ է, իսկ աւելորդները աղքատի
տունի՛ համաձայն այս օրուն քարոզիկդ:
— Ի՛նչ սպուր կերեր ես, կնի՛կ, քեզի ո՞վ ըստ. ստանկ
բան ընել:
— Ձե՞ որ քարոզիկ մէջ ըսիք թէ՛ եթէ երկու շաբթի ու-
նիք, մէկը աղքատին տուէք:
— Վա՛յ քեզի կնի՛կ, ես այդ քարոզը մեզ համար չխօսե-
ցայ: Ես այդ քարոզը տալու համար չխօսեցայ, այլ՝ աւելու
համար: Ո՛չ թէ որպէսզի մենք տանք, այլ որպէսզի մեզի տան
Այդքան միամիտ էի կարծելու համար թէ՛ մենք մարդու բան
կուտանք:

Անցեալ տարի, թրքական երեսփոխանական ժողովի բաց-
ման առիթով, հանրապետութեան նախագահ Իսմէթ Ինէօնիւ իր
ձառք խօսելով աշխարհին կը յայտարարէր թէ՛ «բարձր փոքր ազ-
գիքը ազատ ու անկախ ըլլալու են և նման քաղաքականութիւնն
մը թուրք քաղաքականութեան համընթաց է»:

Տեսայ, որ շատ մը հայեր խանդավառուած էին այս ձառով,
կարծելով թէ՛ արդի թուրքի հայերու, քիւրտերու ու վերջա-
պէս իր արեւմտաստեղծեան սակ այլոք ազգերուն հանդէպ կատար-
ուած դարաւոր անիրաւութիւնը սրբազրել կ'ուզէ ու անոնց ան-
կախութիւնը շնորհել կը խոստանայ:

Աւելորդ կը գտնեմ հայերու այդ լաւատեսութիւնը, քանի
որ աւելի քան երբեք վստահ եմ, որ եթէ հայկական պատգովա-
ւորութիւն մը ներկայանայ Իսմէթ Ինէօնիւին՝ անկախութեան
խնդրանքով (համաձայն իր ձառին), ան պատգովաւորութեան պի-
տի պատասխանէ:

— Միամիտներ, ես այդ ձառով ո՛չ թէ՛ ուրիշներուն ան-
կախութիւն տալ ու թրքական հողեր բաշխել ըսել ուզեցի, այլ

ՄՐԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՍՏԱՀ Է

- Ուրեմն, պր. բժիշկ, դուք
վստահ էք որ ես պիտի անող-
ջանամ:
— Այո՛, որովհետեւ այս հիւ-
ւանդութենէն հորիւրէն մէկը
միայն կ'անողջանայ, ցարդ 99
հոգի ձեռքէն անցան և բոլորն
ալ մեռան, դուք 100-րդն էք,
հետեւաբար վստահ եմ որ պիտի
անողջանաք:

ՄՐԱՐՏԻՑ ԳԻՒՎԱՅԻՆ

Երկրաչափ մը գիւղացիի մը
ցոյց կուտայ երկաթուղիի ա-
պագայ գիծին համար փնջուե-
լիք չէնքերու յատակագիծը:

— Նոր գիծը չի՛ փ շիտակ ձեր
տունին մէջէն պիտի անցնի,
կ'ըսէ:

— Եւ դուք կը կարծէք ո՞ր
ես կամ ծառաս պիտի երթանք
դուք բա՞նալ, ամէն անգամ որ
չազգեկառք մը մեր տան առջեւը
գայ...
ԿԱՆՆԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Գոհարովածուսի մը խանու-
թը:
— Նշանած իս նուրբիլիք սա
մատանիին մէջ կ'ուզեմ որ սա
խօսքերը քանդակէ՞ք. — «Պողոս
սա Մասի»:

— Սորհաբը չիմ տար:
— Ինչո՞ւ:
— Որովհետեւ եթէ օր Մա-

սին միտքը փոխէ, չէք կրնար
այլեւս այս մատանին գործածել:
Ինձի մնայ նե՛՛ «Պողոս սա իր
միակ պաշտելին» գրել տուէք:

Աղքատը. — Պարոն, ճիշտ ետ-
թը օրէ որ անթիւ եմ:
Հարուստը. — Ի՛նչ կ'ոնք, ը-
սելէ շատ դրամ խնայած ըլլա-
լու էք, շարունակեցէ՛ք, ապա-
գայ կը խոստանաք:

Մարդուն մէկը կը հարցնէ իր
գիտուն բարեկամին.
— Թուեաւոր տունկ մը ի՛նչ-
պէս կը ճանչցալի:

Գիտունը. — Ծառ դիւրու-
թեամբ, պէտք է կերցնել դայն
զգքանչին, յետոյ սպասել ար-
դիւնքին...
Կրնա դաշնակի վրայ նուա-
գիւ ստըվեցաւ, իսկ աղջիկս՝
ջութակ կ'ածէ:

— Իսկ դո՞ւք:
— Ե՛ս... իսկ ես ինքզինքիս
համբերութիւն կը ստըվեցնեմ,
որպէսզի կարենամ հանգուրթել:

— Չաւակո, ես այլեւս հող-
նամ եմ, կ'ուզեմ այլեւս հան-
գտանալ, որովհետեւ տարիքս
առի է անս ատոր համար ալ
աշխատանոցը քեզի կը յանձ-

որպէսզի ուրիշներ մեզի տան, զոր օրինակ՝ Երեւանը, Սուրբան,
Մաւուրը, Աղբոյէճանը եւս, իմ ձառս ձեր քահանային տուած
քարոզին նման միմիայն անհերք համար է և ոչ թէ տալու: Մենք
մարդու հող ու անկախութիւն կուտանք: Վեց հարիւր տարուան
պատմութենէն դաս չէ՛ք առած: Վա՛խ ձեզի...
Փոլոսիւ

ՍՈՑԻԱԼ. — Այս շարաթը ամե-
ցէ՛ք բարձրացարուք շարաթ
յայտարարուած էր, ամուսնա-
ցող ամուսնացողի, ըստ առա-
գարչին ներք մարգարէութեան,
այս ամուսնի մէջ ամուսնացող-
ներուն հարիւրին 90-ը երջա-
նիկ կ'ըլլան, ու մանչ զաւակով
կը պարգեւատրուին:

ՓՂՈՎՏԻՒ. — Արիներու հայ
և պուլար դրօշակներով հայ
եկեղեցւոյ մէջ ներկայութիւնը,
կարգ մը մարդոց փորթ ցա-
պածառած է, այս պատճառով
այլ սալիլովի ֆալիփի մեծ պա-
հանջը զգացուած է:

Կ'իմանաք թէ կարգ մը «ա-
նոյշ ջուրի» ազգայիններ, եր-
դում ըրած են յետ այսու այդ-
տեակ ազգային հանդէսներու
ներկայ չգտուել, չհիւանդանա-
լու համար:

ՍԱՍՐՈՎՈՅ. — Ձմեռուան եւ
դանակին թուրիտներուն քա-
ղաւ վարժութիւնը չկարողանե-
լու մտահոգութենէն թեւադր-
ուած, Հ. Մ. Բ. Մ. ի թուրիտ-
ական «Արօղիան» բաժնի վա-
րիշը հարկադրուեցաւ մինչեւ
զարուն ցերեկոյթներ կազմա-
կերպելու տաժանելի աշխա-
տանքին ըծուել...:

ՊՈՒՐԿԱԶ. — Սողադութիւն
ամէնեցուն, հին ըսի ըսուները
վերջ գտած են, բայց, կենդանի
գործ ալ չկայ, ի՛նչ կը բանի
մեր երեստարութիւնը, ո՞ր
օրուն կը սպասէ հայկական
չունչ ու սի՛ր ցուցադրելու հա-
մար:

ՎԱՍԿԱՆ. — Ստայծով քունի
մէջ են մեր վառանցիները, քի-
չիկ մը աշքը բայցքն ու ար-
թունները Սոֆիա չուած են: Եւ
րեւի ամարուան գալուն կը ըս-
պասեն երկար թմիքին սթա-
փելու համար:

Նեմ:
— Հայրիկ, ինչո՞ւ կ'ածա-
պրես, մէկ երկու տարի եւս
աշխատէ, անկէ յետոյ երկուքս
մէկ գործը կը ձգենք:
ՎԱՍԿ

— Կ'ըսն թէ դրամը մարդս
վախկաւ կը դարձնէ:
— Այո, այդպէս ըլլալու է,
ամուսնիս երբ քովը դրամ կ'ու-
նենայ և գիտ կը գրկէ, դեփ
զեզին կը կարի:

ՐԱՆԱՍՏԵՂՈՐԸ

— Ո՛հ, Աստուած իմ, երանի
Իտալիա կարենայի երթալ, յոն
գտնէ կլիմայի մասին բան մը
զբիւ պիտի կրնայի, քանի որ
գրեւու համար բան մը միտքս
չի գոր:

ՆՈՒՐՀԱՆ

«ՄԵՂՈՒ»-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻԷՆ ՆԵՐՍ



ԱՐՍԳ. ԴԱՐՄԱՆՈՒՄ ՄԸ

(ԻՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԳԻԾՈՒԱԿԱՆ ՎԻՊԱԿ)

ԵՐ. ՕՏԵԱՆ

(Շարունակութիւն նախորդ թիւէն եւ վերջ)

Ու այսպէս հարցումներ կը գրգռուէին իր մտքին մէջ, և սուկոյն մ'չ ոք կրնար պատասխանել անոնց։

— Զէ՛, սա քաջուելիք բան չէ, վճռեց ինքնիրեն։

Իր իկուներ նոր դանդաղ իր ամուսնոյն։

— Ատառընէ մինչեւ իր իկուներ, մի մի նակ կը ճաթիմ կոր։

— Վաղը կիրակի է, մինչեւ իր իկուներ հոս եմ, տեղ մը կ'երթանք ու ժամանակ կ'անցընենք, դիտել տուաւ Սերովբէ ազա հարցաբար չեշտով մը։

— Ես իմ տուն տեղս կ'ուզեմ...

— Աչքդ գոցես բանաս, ամ իսը կ'անցնի։

— Ամէն մէկ օրը տարուան մը չափ կերուած կը ինծի։

Եւ եղաւ որ կիրակի առտու դարձեալ գացին ծովեզերք լուգանքի։ Սերովբէ ազա որ քիչ շատ վարժուած էր ծովի պագ ջուրին հետ, ասանց դժուարութեան իր լուգանքը կատարելով դուրս ելաւ ջուրէն։

Թագուհի հանրմ կրկնեց իր յանկերքը։

— 26 հատ մնաց։

Երբ Սերովբէ ազա չորացուելու վրայ էր, Թագուհի հանրմ ներշնչուած դէմքով մը երկանք դարձաւ ու ըստ։

— Տարթորը քեզի ի՞նչ ըստ... 30 անգամ ծով պիտի մըտանանկ չէ՞։

— Այո՛, արդպէս պատուիրեց, պատասխանեց ամուսնուր։

— 30 օրուան մէջ 30 անգամ պիտի մանաս պատուիրեց։

— Օրուան խօսք չըբաւ։ 30 անգամ անուագն ծով մտնելու ես հրամայեց։

Եւ մինչ Սերովբէ ազա, վրան չորցնելէ ետքը, կը պատարասուէր հագուելու, կ'ընր յարեց։

— Կեցի՛ր, մի՛ հագուիր։

— Ինչո՞ւ համար, հետաքրքրուեցաւ ամուսնուր։

— Քանի որ տարթորին պատուէրը հատի վրայ է և ո՛չ օրուան քիչ մը ետքը անգամ մըն ալ մտի, և ատով օր մը կը շահնք։

— Ի՞նչ կ'ըսես, կնի՛կ։

— Շատ չիտակ խօսք կընեմ կոր, հայտէ՛, մէկ մըն ալ մըտի՛ր...

Ս. յապիտի հրամայական չեշտ մը կար Թագուհի հանրմի այս խօսքերուն մէջ, որ խեղճ ամուսնուր ստիպուեցաւ համակերպիլ։ Նոր լուգանք մը առաւ «25 հատ մնաց», մասնեց կ'ընր։ Եւ երբ Սերովբէ ազա կը փորձէր հագուել, կ'ընր դարձեալ արգիլեց զինքը, գոչելով։

— Մէկ մըն ալ մտի՛ր, լիննայ...

— Ճանրմ, Թագուհի հանրմ, խենթեցա՞ր։

— Քանի որ խեղճը հատի վրայ է, մտի՛ր լիննայ։ Մի՛ վախճար, չես մեռնիր, հայտէ, մտի՛ր կ'ըսեմ կոր, սինկընրս սաքի մի՛ հաներ։

Թագուհի հանրմ ի սինկընրու յատնայս վիճակը բան մըն էր, որով ամէնէն աւելի կը սարսափէր խեղճ ամուսնուր։ Ու... նորէն մտաւ ջուրը։

— «24 հատ մնաց», խորհեցաւ Թագուհի հանրմ, սակայն այդ ալ բաւական չնկատուեցաւ կնոջ կողմէն, որ չորբորդ լուգանք մը պահանջեց՝ քատորդ ժամու չափ հանգիտեց մը ետք։ Սերովբէ ազա համակերպեցաւ։

— 23 հատ մնաց, գոչեց կ'ընր յաղթականօրէն։ Տեսա՞ր որ բան մը չես ըլլար կոր... ընդհակառակը, երևող գոյն եկաւ կարծես... ասնկ արեւին տակ քիչ մը չորցուէ, մէկ մըն ալ մտի։

— Ատուծոյ սիրուն, ա՛լ բաւական է։

— Ձիգերս թուեց մի՛ հաներ...

Ու այսպէս լուգանքները շարունակուեցաւ և 2 ժամ ետքը 17 հատ մնացած էր, որպէսզի 30 թիւը լրանար։ Մութը կոխելէն ետքը, ծովեզերքէն անցնողները տեսան գիրուկ կարճահասակ մարդ մարդ մը որ, դողաճար՝ ջուրէն դուրս եկելու, դողաճառ քայլերով։ Սերովբէ ազան է, որ իր 30-րդ լուգանքը կ'աւարտէր։

Հետեւեալ օրը Թագուհի հանրմ ուրախ գուարթ կը վերադառնար ֆէրիքէօյ, իր սեփական տունն ու փողոցը։ Սակայն այս արագ դարմանումը սեւէ օդուտ չէր ըրած Սերովբէ ազայի անհանգստութեան, բայց ի փոխարէն՝ ստացած էր յօդացաւ, որ այժմ խեղճ մարդը կը գամէր անկողնին։

— Ես արդէն բնաւ համամիտ չեմ այդ ծով մտնելուն, կը կրկնէր Թագուհի հանրմ իր դրացններուն։

Թէեւ շատ անգամներ կը գրգռուէր, կը կրկնուէր և ընդհանուրին լուրջ նկատողութեան կը յայնձուէր մեր կարգ մը յոսի բարքերու մասին, զորս կը յայտնաբերէր կարգ մը վայրերու մէջ, մանաւանդ յայտնատարին վարկաբեկելով մեր ազգային արժանապատուութիւնը։

Չունենք և գուցէ պիտի չունենանք այն կարգն ու սարքը, այն երկիրը զամբիւրէնն ու կարգապահութիւնը, որոնք վայրէն են երբ մեր որբավայրերին ներս կը մտնենք, հակասակ տնոր որ մեծ ջերմեամբ և թեւում մտեր կը վառենք և ախտեր կընենք։

Հանդիսաւոր օր է, եկեղեցիներն ներս կը մտնենք, խառնութեամբ յարմարութիւն մը գրաւած է ամբողջ սրբավայրը։ Այսպէս ցէ ժամու մը նախ և առաջ ձեր աւաղաքութիւնը կը գրաւէ։ Ամէն կողմ եւ ուղի, գացող եկացներ, աստի՛ն փոփոսք մը, անդին՝ գաւթի մէջ՝ հուարուած երիտասարդութիւն, որոնք՝ գուցէ սինեմայի վրայ կը խօսակցին։ Պատաններ կամ տարեց կ'ընեն, որոնք անոր ուտտոր արդուգործին անյարմար կամ անխաչել ըլլալու մասին կը բամբասեն, երիտասարդ կիւներ՝ որոնք այս կամ այն խօսակցեալ կամ նորագոյն անգլիները մտնանելով, կը քառահրեն և կամ կը գովեն անոնց բորի կամ յոսի բնաւարտը։

Մէկէն կը նային ջաջ ալու մը, բարաբար նային, ճառք ճառք քաղաւածքով մը կ'անցնի և իր մեծ աղալութեանը գոհացում տալու համար, աջակողմեան դասի մէջ կը կանգնի։

Եւ այս թո՛ւ ու բո՛չն մէջ, մարդ կրնայ մտամոլի կերպով հետեւելու արարողութեանց։ Նոյնիսկ երբեմն Աւետարան կարգացող քահանան անգամ, հակառակ որ անօրինական է, ստանձայններուն թաքթութեան ջղախաչած, Աւետարանը կ'իտատ կը թողու ու մը ջանկեալ կը կողմ գացող եկողները կը սաստէ ու դարձեալ կը շարունակէ իր Աւետարանը։

Եւ այս ամէնը ի՞նչու... ուրիշ հետեւ տակաւին չենք ըրած սրբավայրը մը վերաբերելու, չունենք այն պատկարանքը, որ ամէնէն աւելի եկեղեցիներն հանդէպ ունենալու պարտաւոր են։

Բայց այս գրաւածները որո՞ւ — ձայն բարբառոյ յաւասպար։

Նոյնիսկ կարող ենք ըսելու, որ մեր ժողովուրդը բարեպաշտ չէ, եկեղեցեացի չէ։ Ամենեւին, քանի որ մեր օրհնեալ ժողովուրդը, մանաւանդ տիկնայները, բերնք եկեղեցի գալէն զատ օրօրոյցի մասնկրկներս անգամ հետեւներն կը բերեն, դպրաց դատու հետ բերնք ալ բերնք գրեցած եղանակով ձայնակցելու համար։

Բայց պէտք է գիտնալ, բարեպաշտութիւնը արկաբեկ, ուրբորներ և պարսկներ, դուք որ անուան մեծ և հանդիսաւոր օրերուն միայն եկեղեցին կը մտարեք, այն ալ ձեր նորածեղութիւնները ցոյց տալու մեծ փառաբերութեան խթան։

Իսկ եկեղեցեաց աւարտումէն վերջ, երբ դուրս կ'ընենք, բակ մէջ ալ տարբեր տեսարան փամաղաբայր զոյգբու, որոնք կը սկսին բարձրաձայն խնայել, այլազան լեզուներով խօսիլ են։

Քահանայի ըսածին պէս. — «Օրհնեալ ժողովուրդ, եթէ կը կարենք, որ եկեղեցիի պատկերները համարելով կամ ստանակ մը մտեր վառելով

ՆԵՐՍԻ Ի ՆԵՐՍԻ

ՆԵՐՍԻ Ի ՆԵՐՍԻ

Պատանարար տեղ մը կարգացնէր հնդիկ կ'ընեբու համար տասը պատուիրաններ, որոնք ստարեւ կը յանձնէր մեր ընթացողներու աւաղաքութեան, որոնք շատ կը «նախապատասխանեն» ներկայ կնոջ վարակելակերպին, անչու շատ բացատրութիւնները յարգելով։

Իւրաքանչիւր պատուիրանի հետ կուտանք նաեւ կարծիք մը մեր կ'ընեբու համար։

1. — Աշխարհի մէջ հնդիկ կընոջ համար ուրիշ Ատաւած դոյութիւն չունի, բայց իր ու մուսիւնէն։

(Հնդիկ կ'ընեբու համար այս՝, բայց ոչ մեր կ'ընեբուն, որովհետեւ աւստր միայն այր մը ունին իր պատասխանատու անօրէն՝ իրենց ըրած ծախսերուն, ուրեմն մեր կ'ընեբու Ատաւածը մէկ չէ, երբ նորածեղութեան հետեւելը կայ։

2. — Նոյնիսկ եթէ ամուսնուր ձեր, ազեղ կոշտ ըլլայ և բարեկամութիւններ ունենայ, կ'ընը պարտաւոր է հնազանդի իր ամուսնոյն և անորմէ դողալ։

(Հնդիկաւորներ մէջ կ'ընայ ըլլալ, սակայն մեր մօտ, եթէ այրը ձեր և հիւանդոտ է, կ'ընը գիշեր կերակ կ'աղօթէ, որ ժամ առաջ մեռնի, որպէսզի ինքը երիտասարդ որբեւայրը մնայ, իսկ եթէ ամուսնուր բարեկամութիւն ունի և հարստութիւնը կը մտնի, կ'ընը ամէն գնով կ'աշխատի օգտուել անոր այս սովորութիւնէն՝ անկէ դրամ քաջելով)։

3. — Կ'ընը իրաւունք չունի այրին հետը նայն ճաշի սեղանը նստելու, և պէտք է ինքզինքը հպարտ զրայ, եթէ ամուսնուր իրեն աւելցուքն կնոջը սայ։

(Տես որքան ախմար են հընդիկ կ'ընեբու միայն կէտին մէջ մեր կ'ընեբու բաւական յատաջացած են, օրինակի համար, կերակուրը եթէ այրած կամ անհամ է, այրը պարտաւոր է հագար փառք տալով ուտել, և պէտք է իր կնոջ շնորհակալ ըլլայ, որ այդքանն ալ ըրած է)։

4. — Կ'ընը պարտաւոր է ամուսնուրն ըւրաքանչիւր փախաքն գոհացում տալու։

(Իսկ մեր մօտ ընդհակառակը, կ'ընը կը կատարել ամուսնուր, կը տանջէ գայն ամենաջնիւն նորածեղութեան մը համար և այրը պարտաւոր է կնոջ փախաքններուն գոհացում տալ, այլապէս...)

5. — Եթէ այրը կը խնայ, կ'ընն ալ պէտք է որ խնայ, իսկ եթէ այրը լայ, կ'ընն ալ հետը պէտք է լայ։

(Հոս ալ «պակասութիւն» եթէ (ճարձ կարգալ 3-րդ էջ 'Ի. Ո.)

և խաչակնքելով մեր եկեղեցին ու մեր կրօնը սիրած ու պատուած կըլլանք, բնաւ երբեք։ Ջերմեամբութիւն ըրած կըլլանք ա՛յն ատեն, երբ կարգապահութիւն կը վերաբերուինք և պատկասանք կ'ունենանք մեր սրբատեղիներու մէջ և անոնց հանդէպ։

Իրուտ ԵՆՐՈՒՆԻ

ԱՅՍ ԹԻԻԷՆ ՍԿՍԵԱԼ ԿԱՐԴԱՑԷՔ
ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ
ԱՂՏԻ ՄԸ ՀԱՄԱՐ ԵՐԵՔ ԲԺԻՇԿ

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԿՍՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ
 (Գիւնի ձեւով — ներկայացնելու յարմար)
 որ ամենադժուարահամ ընթերցողներն անգամ պիտի գոհացնէ և կուշտ ու կուռ խնդացնէ։